



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ ՀԻՄՆԱԴՐԱՄ

**ՈՒՂԵՑՈՒՅՑ**

**ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ, ԿԱԶՄՄԱՆ  
ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ**

## Ներածություն

Առարկայական կրթական ծրագրի մշակումը սկսվում է ծրագրի նպատակների սահմանումից, որին հաջորդում են ծրագրի կրթական վերջնարդյունքների ձևակերպումը: Հաջորդ քայլը ուսանողի համար առավել արդյունավետ ուսումնառության և դասավանդման մեթոդների ընտրությունն է: Այնուհետև որոշվում են գնահատման այն ձևերը, որոնք հնարավորություն կտան ուսանողներին դրսևորելու ձեռք բերած կրթական վերջնարդյունքները, ապա համարժեք կերպով չափելու դրանք:

Վճռորոշ նշանակություն ունի հետևյալ 3 հանգուցային տարրերի փոխկապակցվածությունը.

1. ծրագրի ակնկալվող կրթական վերջնարդյունքները,
2. ուսումնառության և դասավանդման մեթոդները, որոնք նախատեսված են ուսանողի կողմից այդ վերջնարդյունքները հաջողությամբ ձեռք բերելու համար,
- 3 գնահատումը, որը որոշում է այդ վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակը:

### 1. Ծրագրի կրթական նպատակի սահմանումը

Նպատակը դասախոսի կողմից պլանավորված կրթական մտադրություններ են, որոնք ընդհանուր նկարագրում են, թե, մասնակցելով տվյալ դասընթացին, ինչ կարող են սովորել ուսանողները: Նպատակները պետք է բավարարեն հետևյալ հիմնական պահանջները.

- բոլոր դասընթացն երբ պետք է ունենան հստակ ձևակերպված նպատակներ,
- նպատակները պետք է լինեն հակիրճ և ձևակերպվեն ուսանողին հասկանալի լեզվով,
- պետք է մատնանշեն այն հնարավորությունները, որոնք ձեռք կբերեն ուսանողները՝ մասնակցելով դաընթացին:

Ծրագրի նպատակը տարբերվում է կրթական վերջնարդյունքներից և ունի հետևյալ տարբերակիչ առանձնահատկությունները.

1. Նպատակներն ուրվագծում են այն կրթական ձեռքբերումները, որոնք կարող են ունենալ դասընթացին մասնակցող ուսանողները:
2. Նպատակների իրականացումը չի կարող գնահատվել անմիջապես ուսումնառության ընթացքում:

Մովորաբար 5-6 նպատակի թվարկումը բավարար է ծրագրի ընդհանուր բնութագրական առանձնահատկությունները ներկայացնելու համար:

Նպատակը ձևակերպելիս ցանկալի է սկսել այսպես.

Ծրագիրը նպատակ ունի "... և շարունակել կոնկրետ նպատակների թվարկումը, որը

կարելի է սկսել հետևյալ բայերով՝ զարգացնել, ապահովել, օժանդակել, դաստիարակել, տեղեկացնել, ծանոթացնել, ձևավորել, նախապատրաստել, տրամադրել, խթանել և այլն:

## 2. Դասընթացի կրթական վերջնարդյունքների ձևակերպումը

Կրթական վերջնարդյունքները ուսանողներին ինֆորմացիա են տալիս, թե նրանք ինչ պետք է իմանան, հասկանան և կարողանան անեն և մատնանշում են, թե հատկապես ինչը պետք է գնահատվի դասընթացի ավարտին:

Ուսումնական մոդուլի/դասընթացի կրթական վերջնարդյունքները պետք է բավարարեն հետևյալ պահանջները.

1. Բոլոր կրթական վերջնարդյունքները պետք է սահմանվեն նվազագույն ընդունելի (շեմային) մակարդակում:
2. Ծրագիրը պետք նկարագրի միայն այն կրթական վերջնարդյունքները, որոնք պետք է ձեռք բերեն ծրագրում ընդգրկված բոլոր ուսանողները:
3. Ուսումնական մոդուլի բոլոր կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը պետք է գնահատվի:
4. Անցողիկ գնահատական ստանալու համար ուսանողը պետք է յուրացնի .. ուսումնական մոդուլի համար սահմանված բոլոր վերջնարդյունքները

Ուսումնական մոդուլի կրթական վերջնարդյունքները գրելիս կարելի է առաջնորդվել հետևյալ սկզբունքներով.

1. գրել ապառնի ժամանակով,
2. տվյալ մոդուլի համար որոշել 4-6 կրթական վերջնարդյունք,
3. վերջնարդյունքները լինեն իրատեսական և չափելի,
4. գրվեն ուսանողին մատչելի լեզվով,
5. շաղկապված լինեն դրանց ձեռքբերման մակարդակը գնահատող հստակ չափանիշների հետ,
6. նկարագրեն, թե դրանց ձեռքբերման արդյունքում հատկապես ինչ են կարողանալու անել ուսանողները:

Կրթական վերջնարդյունքների դասակարգման և ստորադասման ամենաընդունված ձևերից մեկը Բլյումի տաքսոնոմիան է: Բլյումի կողմից առաջ քաշած մեթոդաբանությունը հնարավորություն է տալիս ձևավորել չափելի վերջնարդյունքներ:

Բլյումի տաքսոնոմիայի յուրաքանչյուր մակարդակի նկարագրման համար առաջարկվում է օգտագործել հետևյալ բայերը.

	Մակարդակը	Իմացության ձևերը	Համապատասխան բայերը /ցանկը շարունակելի է/
Գիտելիք և իմացություն	1	Գիտելիք որոշակի փաստերի, — Արտահայտել, գիտակցել, ընտրել, տվյալների հիշողություն/	Արտահայտել, գիտակցել, ընտրել, վերարտադրել, չափել, որոշել, թվարկել, անվանել, վերհիշել, գրանցել, պնդել և այլն
	2	Իմացություն փաստերի, տվյալ- ների համակարգման ունակություն՝ իմաստը հասկանալու նպատակով	Որոշել, սահմանել, ներկայացնել, ձևակերպել, բացատրել, հակադրել նկարագրել, քննարկել ճանաչել, հիմնավորել, ընտրել, մատնանշել, լուսաբանել, դասակարգել և այլն
Կարողություններ և հմտություններ	3	Կիրառություն /առաջադրանքի կամ խնդրի գիտելիքի իմացության օգտագործում	Կանխատեսել, ընտրել, գնահատել, գտնել, ցուցադրել, օգտագործել, կառուցել, հաշվարկել, կիրառել, ցուցաբերել, լուսաբանել, գործնականում իրականացնել,   սովորեցնել, կատարել և այլն
	4	Վերլուծություն տեղեկատվությունը, բաղկացուցիչ մասերի կամ իմաստների բաժանելու ունակություն՝ մասերի փոխհարաբերությունները կամ նշանակությունը հասկանալու նպատակով	Համեմատել, տարբերակել, համադրել/հակադրել, տրոհել/ մասերի բաժանել, տարբերակել, վերլուծել, հաշվարկել, փորձարկել, նշանա- բացահայտել տարանջատել, լուծել
	5	Մինթեզ/համադրություն (տե կատվությունը կամ փաստե նորովի համատեղելու ունակութ- յուն խնդրի կամ հիմնախնդրի ավելի լավ կա համակողմանի ընկլալման նպատակով)	Միավորել/միացնել, ի մի բերել, փաստարկել, հարաբերել/կապ հաստատել, ամփոփել, կազմա- կերպել/համակարգել, եզրակաց- նել/եզրահանգել, նախագծել, առաջարկել, վերաձևակերպել, քննարկել, ստանալ/դուրս բերել, մեկնաբանել, ընդհանրացնել և այլն
	6	Գնահատում/արժևորում (առկա տեղեկատվության հիման վրա եզրահանգումներ անելու և դրանք գնահատելու ունակություն)	Արժևորել, օժանդակել/աջակցել, հակադրել/համադրել, ընտրել, քննադատել, որոշել, համեմատել, գնահատել, եզրահանգել, հետևություններ անել, ենթադրել, պաշտպանել և այլն

## Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրությունը

Ուսումնառության վերջնարդյունքների ձևավորմանը հետևում է դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրությունը, քանի որ ուսումնառության վերջնարդյունքը հաջողությամբ ձեռք բերելու համար հարկավոր է դիտարկել, թե ուսումնառության ինչպիսի ձևեր պետք է ընտրել: Դասավանդման և ուսումնառության մեթոդները դասավանդողի և ուսումնառողի համատեղ գործունեության եղանակներ են, որոնք ուղղված են նրանց կողմից կրթական նպատակների նվաճմանը: Յուրաքանչյուր առարկա ըստ իր առանձնահատկության պահանջում է դասավանդման և ուսումնառության տարբեր մեթոդների կիրառում: Յուրաքանչյուր առարկայի համար անհրաժեշտ է ըստ դասընթացի ձևի (դասախոսություն, լաբորատոր/գործնական սեմինար) և նշված թեմաների ընտրել համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդը:

### Ուսումնառության մեթոդներ

1. Ռեֆերատների պատրաստում և ներկայացում
2. Ուսումնամեթոդական գրականության օգտագործում
3. Մասնակցություն պրակտիկաներին և հաշվետվությունների պատրաստում 4. Մասնակցություն լաբորատոր փորձերին
5. Լաբորատոր/գործնական խնդիրների լուծում
6. Լաբորատոր փորձի խմբակային կատարում
7. Նյութերի պատրաստում և զեկուցում, մասնակցություն քննարկումներին
8. Հաշվարկագրաֆիկական աշխատանքների կատարում և այլն:

Ուսումնառության ձևերի ընտրությունից բխում է դասավանդման մեթոդների ընտրությունը, որոնք արավելապես կնպաստեն և կօժանդակեն դրանց հաջող իրականացմանը: Դասավանդման դերը այնպիսի ուսումնական միջավայրի ստեղծումն է, որտեղ ուսանողները հաջողությամբ ձեռք կբերեն ակնկալվող գիտելիքները, կարողություններն ու հմտությունները:

### Դասավանդման մեթոդներ

1. Տեսական նյութի բացատրություն,
2. Զրույց,
3. Երկխոսություն,

4. Լաբորատոր աշխատանքի բացատրություն,
5. Ցուցադրական նյութերի ներկայացում և բացատրություն,
6. Մասնագիտական փորձերի անցկացում,
7. Թեմայի շուրջ խաղերի կազմակերպում,
8. Քննարկումներ,
9. Նյութի բացատրություն տարբեր ցուցադրական նյութերի կիրառմամբ (համակարգչային ցուցադրում, ցուցանմուշներ, պաստառներ և այլն)

Ուսումնառության և դասավանդման մեթոդները պետք է,

- Լավագույնս նպաստեն կրթական վերջնարդյունքներով ձևակերպված գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերմանը ուսանողների կողմից: Հաշվի առնեն ուսանողների գիտելիքների ու ընդունակությունների տարբեր մակարդակները և լինեն բազմաձև:
- Խրախուսեն ուսանողների ակտիվությունը լսարանում, ինքնուրույնությունը և որտեղ դա պետք է տրամադրեն խմբային աշխատանքի հնարավորություններ::

Դասընթացի կրթական վերջնարդյունքների գնահատումը

Դասընթացի գնահատումը պետք է իրականացնել հետևյալ մեթոդաբանությամբ.

1. Այս բաժնում անհրաժեշտ է հանգամանորեն նկարագրել գնահատման և ստուգման մեխանիզմները և գործիքները: Գնահատման և ստուգման գործիքները պետք է լինեն չափելի և զուրկ երկակի մեկնաբանությունից, ինչպես նաև երկակի կիրառման հնարավորությունից: Գնահատման գործիքները պետք է հասկանալի լինեն ուսանողի համար: Ուսանողը պետք է իմանա, թե ինչպե՞ս է գնահատվում իր աշխատանքը, ի՞նչ բաղադրիչներից է կազմված ավարտական միավորը և ինչպե՞ս և ի՞նչ գործիքներով է ստուգվում յուրաքանչյուր բաղադրիչ: Այս բաժնի նկարագրությունը պետք է համաձայնեցված լինի ուսումնական հաստատությունում գործող գիտելիքների գնահատման կարգի հետ:

2. Քանի որ գնահատման նոր համակարգում վերջնական միավորի մաս է կազմում ուսանողի մասնակցությունը ուսումնական պարապմունքներին, ապա այդ մասնակցությանը դասախոսի կողմից ներկայացվող պահանջները պետք է մանրամասնորեն ներկայացվեն (օրինակ՝ ակտիվություն, հարցերի տեսքով, մասնակցություն քննարկումներին, առաջադրանքների կատարում սահմանված ժամկետներում և այլն) և հստակ նշվի, թե ի՞նչ սկզբունքով է կատարվելու գնահատման այդ բաղադրիչի ձևավորումը:

3. Միջանկյալ կամ ընթացիկ քննությունների պարագայում անհրաժեշտ է նկարագրել ընթացակարգը, ստուգման և գնահատման մեխանիզմն ու գործիքները (օրինակ՝ թեստի

պարագայում պետք է նկարագրել նրա կառուցվածքը, տրամադրել նմուշօրինակը, ներկայացնել գնահատման չափանիշները և անցկացման ձևը: Եթե միջանկյալ կամ ընթացիկ քննությունը թեստի միջոցով չէ իրականացվում, այլ կազմված է տեսական հարցերից, ապա պետք է նշել դրանց քանակը, յուրաքանչյուր հարցի արժեքը և գնահատման սկզբունքը):

4. Գրավոր նյութի (էսսե, ռեֆերատ, կուրսային աշխատանք) պարագայում պետք է պարզ և հստակ նկարագրել բոլոր այն չափանիշները, որոնցով առաջնորդվելու է դասախոսը տվյալ նյութը ստուգելու և գնահատելու ընթացքում:

Ընթացիկ և վերջնական ստուգումների ձևերն են.

- անհատական և խմբային առաջադրանքների գործնական պարապմունքների ընթացքում,

- կատարում սեմինարների և ստուգողական աշխատանքների կատարում,

- ռեֆերատների պատրաստում, հանձնարարված ընթացիկ նյութերի պատրաստում, հարցումներ /բանավոր և գրավոր/,

- թեստավորում,

- ստուգարք,

- քննություն

Գրականություն

Մոդուլային ծրագրի ավարտին նշվում է հիմնական և օժանդակ գրականության ցանկը